«ԼԱՎՈ» ՍՊԸ

ք.Երևան, Փ.Բուզանդի փող. 1/3, 6-րդ հարկ

հեռ. (091) 56-12-22
lavollc@mail.ru
lavo.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000479, 1-ին դաս

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՏՐՎԱԾ Է

2024-09-04, «ԼԱՎՈ» ՍՊԸ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ Փ., 1/3, 6-ՐԴ ՀԱՐԿ

Գործողության ժամկետը՝ 04.09.2029թ.

ՀԱՄԻՐ ՀԱՄԱՐ՝ U6CF FIC8 6AF5 0CEC

Սույն վկայագիրը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Վկայագրի վավերակնությունը ստուգելն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://certificate.gov.am Հայաստանի Հանրապետության պետական վկայագրերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով նշված համարը կամ սքանավորելով արագ արձագանման նախշագիրը (QR Code)

ՊԵՏԱԿԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՔՊԼ 000479, 1-ին դաս

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Տնօրեն Ա.Սահակյան

«04» նոյեմբերի 2025թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 915-25

«ՀՀ Արագածոտնի մարզի Արուճի Սբ.Գրիգոր եկեղեցու թմբուկի ժամանակավոր պաշտպանիչ ծածկի կառուցում» նախագծանախահաշվային փաստաթղթերի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ «ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱԳԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ

ՆԱԽԱԳԾՈՂ՝ «ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱԳԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ

Փորձաքննության է ներկայացված ՀՀ Արագածոտնի մարզի Արուճի Սբ.Գրիգոր եկեղեցու թմբուկի ժամանակավոր պաշտպանիչ ծածկի կառուցման աշխատանքային նախագծի ճարտարապետաշինարարական մասը:

Արուճի տաճարը (Ս.Գրիգոր եկեղեցի) հայկական հոգևոր և ճարտարապետական նշանավոր կոթողներից է:

Ըստ շինարարական արձանագրության՝ Արուճի եկեղեցին կառուցել է Գրիգոր Ա Մամիկոնյանը VII դ. 60-ական թվականներին: Այն վերանորոգվել է 20–րդ դարի կեսերին մինչև թմբուկի ստորին օղակաձև շարքի մակարդակով: Նախկինում ներսից պատված է եղել Համբարձման տեսարանը ներկայացնող որմնանկարներով, որոնք այժմ գրեթե ամբողջապես քայքայվել են: Ավագ խորանի մակերևույթին պահպանվել են նաև հատվածներ Քրիստոսին պատկերող մեծադիր որմնանակարից:

Արուճում պահպանվել են նաև բրոնզի դարի դամբարանների, հին ամրոցի, քարավանատան (XIII դ.) և այլ հուշարձանների ավերակներ:

Տաճարի հարավարևելյան կողմում, 1948-1951 թվականների պեղումների ժամանակ բացվել է պալատական կառույցի մնացորդները, որը նույնպես կառուցել է Գրիգոր Մամիկոնյանը:

Արուճի պատմամշակութային այս միջավայրում այսօր իր գերիշխող դիրքն ունի վաղ միջնադարյան Հայաստանի ամենամեծ չափերով պատմամշակութային կոթողներից մեկը՝ Արուճի եկեղեցին: Այն իրենից ներկայացնում է հայկական վաղ միջնադարյան ճարտարապետության գմբեթավոր դահլիճ տիպի լավագույն պահպանված օրինակ:

Չնայած այն հանգամանքին, որ վերոնշյալ բավականին լայնածավալ նորոգումների շնորհիվ եկեղեցին այսօր կանգուն է, սակայն բավականին մեծաչափ թմբուկի բաց օղակաձև բացվածքից տասնամյակներ անընդհատ ենթարկվելով մթնոլորտային տեղումների անարգել ազդեցությանը, աննկատ ընթանում է քայքայման ճանապարհով, որի հետեւանքներն զգալի են այդ հատվածների քարաշարվածքի, կոնստրուկտիվ համակարգի, մասնավորապես ներքին սալահատակի և ի վերջո պահպանված որմնանակարների ծավալներում:

Զգալի են նաև տաճարի ծածկասալերի շարվածքներում առկա բազմաթիվ քայքայումներ, բուսածածկույթի առկայություն և այլ վնասվածքներ, որոնք ևս կարիք ունեն նորոգման և ամրակայման աշխատանքների: Մասնագիտական շրջանակներում շրջանառվում է նաև տաճարի թմբուկի ամբողջական վերականգնման տարբերակի առաջարկ /հեղ Ա.Մանասյան/, որը սակայն բավականին աշխատատար, երկարատև հետազոտական և գիտական հիմնավորման ու նախագծային երկարատև ճանապարհ է: Տաճարի անընդհատ քայքայումների հիմնական աղբյուրը համարելով թմբուկի օղակաձև բացվածքը, նպատակահարմար է համարվել օր առաջ իրականացնել ժամանակավոր պաշտպանիչ ծածկ, որի համար առաջարկված 3 տարբերակների /ամբողջապես անթափանց, մասնակի երդիկաձև ապակեպատ բացվածքներով և ամբողջապես թափանցիկ՝ ապակեպատ/ էսքիզային առաջարկներից ԳՄԽ քննարկման արդյունքում ընտրվել է վերջին՝ ապակեպատ տարբերակը, որի իրականացման համար և մշակվել է ներկա նախագծային առաջարկը: Նախագծով նախատեսված է ձևավորել ապակեպատ բրգաձև ծածկ՝ գլանաձև խողովակաձև առանցքի շուրջ մետաղական ճառագայթային ուղղությամբ տեղադրվող թեթև ֆերմաների վրա: Բրգաձև ծածկը հուշարձանի ծավալից ընդգծված առանձնացնելու միտումով նախատեսվում է այն տեղադրել մետաղական ոտքերի վրա՝ 60սմ. բարձրությամբ: Թռչունների մոտքը տաճարի ներս կանխարգելելու համար նախատեսվում է օղակաձև կոնստրուկտիվ բարձրությունը դրսից և ներսից շրջափակել մետաղական ցանցով: Կոնստրուկտիվ բոլոր դետալները նախատեսվում է իրականացնել արտադրական պայմաններում, իրականացնել որակյալ փոշեներկում բաց մետալլիկ գույնի և տեղում հավաքել ձգիչներով:

Նախագծով նախատեսված է գոյություն ունեցող շենքի բացակայող թմբուկի փոխարեն իրականացնել նոր ժամանակավոր ծածկ՝ պողպատե կրող ֆերմաներով և ապակուց ծածկով:

Նախատեսվում է իրականացնել թվով 16 պողպատե ֆերմաներ, որոնք ամրացվում են գոյություն ունեցող քարե կոնստրուկցիաների հետ խարսխային ձողերի միջով:

Պողպատե ֆերմաները և մնացած բոլոր պողպատե կոնստրուկցիաները նախատեսվում է պատրաստել գործարանային պայմաններում, փոշեներկել և տեղում հավաքել հեղյուսների միջոցով:

Շինարարության տեղանքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում:

Նախագծի ճարտարապետաշինարարական մասը կատարված է համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի և գործող շին.նորմերին ու կանոններին համապատասխան:

Նախագծի ճարտարապետաշինարարական մասի վերաբերյալ դիտողություններ չկան: Այն երաշխավորվում է համաձայնեցման:

ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՄԱՍ

Փորձաքննության է ներկայացված ՀՀ Արագածոտնի մարզի Արուճի Սբ.Գրիգոր եկեղեցու թմբուկի ժամանակավոր պաշտպանիչ ծածկի կառուցման աշխատանքների նախահաշվի գնահաշվարկը:

Ըստ կատարված ուսումնասիրության, նախահաշիվները կազմված են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն՝ թերությունների ակտի ծավալների հիման վրա:

Աշխատավարձի և մեքենաների շահագործման արժեքները հաշվարկված են 1984թ. գնահաշվարկով և վերահաշվարկված են 2025թ. գներով ընդունելով 1ռ=2474.73՝ աշխատավարձի մասով, 1ռ=3128.79՝ մեքենա-շահագործման մասով:

Շին. նյութերի արժեքը վերցված է ՀՀ ֆինանսների նախարարության՝ 2025թ. սեպտեմբեր ամսվա ինֆորմացիոն տեղեկագրից: Այն շին.նյութերի, սարքավորումների արժեքները, որոնք բացակայում են ինֆ. տեղեկագրից, կապալառու կազմակերպությունը պետք է ներկայացնի համապատասխան հաշիվ ապրանքագրեր:

Նյութերի արժեքների վրա կիրառված է՝

- 6.79% տրանսպորտային ծախսեր,
- 5% նորմերում չնախատեսված այլ նյութերի ծախսեր,
- 2% պահեստավորման ծախսեր:

Ուղղակի ծախսերի վրա տրված է՝

- 13.3% վերադիր ծախսեր,
- 11% շահույթային ծախսեր:

Ըստ հավաք նախահաշիվների լիմիտավորված տոկոսադրույքների, նախահաշվային արժեքը կազմում է. ***53 185,88 հազ. դրամ***, այդ թվում ԱԱՀ ***8 864.31 հազ. դրամ,***

Ըստ սույն փորձաքննության՝ շինարարության ընդհանուր արժեքը՝ ***53 185,88 հազ. դրամ*** երաշխավորվում է հաստատման:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԼԱՎՈ» ՍՊԸ փորձաքննությունը երաշխավորում է «ՀՀ Արագածոտնի մարզի Արուճի Սբ.Գրիգոր եկեղեցու թմբուկի ժամանակավոր պաշտպանիչ ծածկի կառուցում» նախագծանախահաշվային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐ՝ Կ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Վ.ԳԵՎՈՐԳՅԱՆ